ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 16 հունվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ 42.1-րդ հոդվածի՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն 2011թ. դեկտեմբերի 29-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի, 185-րդ հոդվածի, 262-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 1-ին, 3-րդ, 14.1-րդ և 27-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողը գտնում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում «տեղեկատվություն» եզրույթի սահմանման մեջ օրենսդիրը չի ներառել «օրենքի պահանջով կայացված ակտերը», որպես տեղեկատվության տեսակ, ինչը հանգեցնում է

իրավական բացի: Արդյունքում՝ օրենքը չի ապահովում ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով մարդուն երաշխավորված՝ տեղեկատվության ազատության իրավունքը:

Դիմողը նշում է նաեւ, որ վերոհիշյալ դրույթը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, ինչը պատճառ է հանդիսանում տվյալ իրավանորմի տարաբնույթ մեկնաբանությունների:

Գործի քննությունը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

1.Նախ՝ դիմողի հիմնավորումները կապված են ոչ թե վիճարկվող իրավադրույթների սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես դրանց կիրառման իրավաչափության հարցին: Միաժամանակ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ եւ հիմնավորումներ:

Այլ խոսքով՝ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարցը /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի, 185-րդ հոդվածի եւ 262-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ անհրաժեշտ է արձանագրել, որ սույն օրենսգրքի 26-րդ գլուխը՝ ելնելով քրեական դատավարության առանձնահատկություններից, նախատեսել է դատավարական տվյալ փուլին բնորոշ համապատասխան որոշումների տրամադրման սահմանափակ կարգավորում: Օրենսդրի տրամաբանությամբ՝ դատավարական համապատասխան որոշումներին իրավունք ունեն ծանոթանալու այն բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը շոշափվում են այդ որոշումներով: Ուստի դիմողի պնդումներն ակնհայտորեն նպատակաուղղված են իր համար առավել ցանկալի իրավակարգավորման սահմանմանը եւ բնավ սահմանադրաիրավական վեճ չեն հարուցում:

3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կապակցությամբ՝ ենթադրյալ օրենսդրական բացի մասին դիմողի պնդումն անհիմն է՝ հետեւյալ հիմնավորմամբ: Օրենսդրական բացի՝ որպես իրավունքի բացի տարատեսակի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումները 05.02.2010թ. ՍԴՈ-864 եւ 14.09.2010թ. ՍԴՈ-914 որոշումներում: Վերջին որոշման 7-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա, մասնավորապես այն դեպքում, երբ ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա:

Սույն գործին կցված դատական ակտերի վերլուծությունը վկայում է, որ հիմնախնդրի վերաբերյալ ձեւավորված է միասնական և հստակ իրավակիրառական պրակտիկա: Եթե անգամ առկա է օրենսդրական բաց, ապա նկատի ունենալով խնդրի առնչությամբ սահմանա-

դրական դատարանի վերը մատնանշված իրավական դիրքորոշումները, այդպիսի բացի լրացման իրավունքը պատկանում է օրենսդիր մարմնին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

16 հունվարի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-1